

## ՎԱՐԴԱՆ ՍԱԽԿԱԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

### ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՆ

Հոդվածում հանգամանորեն քննարկվում է իրավունքի սոցիալական նշանակության, հասարակական կյանքում դրա տեղի և դերի հետ առնչվող հարցերը: Հոդվածում ընդգծվում է, որ իրավունքի սոցիալական նշանակությունը ինդեքսաված հասկացություն է. այն բովանդակային առումով բարդ և բազմաշերտ երևույթ է:

*Հիմնաբառեր- իրավունք, հասարակություն, սոցիալական նշանակություն, նորմատիվ-իրավական կարգավորիչ, հասարակական հարաբերություններ:*

Մարդկային ցանկացած գործողություն, բնականաբար ունի իր սկիզբը, որը հանդիսանում է էական սյուժե ոչ միայն ելքի սահմանման, ամրագրման համար, այլ նաև մեծ աստիճանով բնորոշ է դրա ընթացքին, արդյունավետ արդյունքին: Մարդկային գործունեության տարբեր ոլորտներում սկիզբը՝ ելակետը, ունի իր առանձնահատկությունը, որոշակի բովանդակությունը: Իրավագիտության ոլորտում այսօր հասարակական խնդիրների ուսումնասիրության ժամանակ, որպես կանոն, գերակայում է սոցիալական մոտեցումը, որը տեսական ուսումնասիրություններում, դրանց հասկացության ձևակերպումներում առանձնահատուկ շեշտադրություն է դնում մարդկային ինստիտուտների, խմբերի և անհատների գիտակցության և կենցաղի սոցիալական, մշակութային-հոգևոր բաղադրիչների վրա: Տվյալ մոտեցումը գերակայում է իրավականի նկատմամբ, որը ստիպում է մեզ տեղադրել խնդրո հետազոտության առարկայի տեսական-մեթոդաբանական հետազոտության հիմքում՝ միևնույն ժամանակ չիրաժարվելով մյուսներից:

Անհրաժեշտ է տեսականորեն վերլուծել «սոցիալական» և «նշանակություն» ելակետային հասկացությունները, որոնց հիմքում, հնարավոր և նաև անհրաժեշտ է արտահայտել հետազոտվող առարկան իր իրավական ձևերում և բովանդակությունում:

Խնդրի առավել ծանրակշիռ գիտատեսական վերլուծության համար նպատակահարմար է կիրառել վերջինիս ընկալումը իրավագիտության մեջ XX- XXI դարերում: Քանի որ տվյալ նյութը առարկայորեն ծանրակշիռ է, դեռ գիտականորեն անհրաժեշտ աստիճանով մշակված չէ, իսկ խորհրդային շրջանում եղել է փակված, անհասանելի վերլուծության համար: Ի վերջո, երրորդը, անցնել տվյալ խնդրի ժամանակակից, հետխորհր-

դային հետազոտությանը: Այսպիսին է խնդրի շարադրման գլխի տրամաբանությունը: Գիտական վերլուծությունը չի պահանջում ունայնություն իմացությունում: Այն հիմնավորում և արտացոլում է հասկացության և այլնի բովանդակության հետազոտական ծրագիրը ամբողջ հնարավոր (դրա իմացության ուժով) և անհրաժեշտ որոշակիությամբ: Դա հատկապես վերաբերում է ելակետային, բազային հասկացություններին, որոնք կազմում են իրավունքի սոցիալական նշանակության հիմնախնդրի բովանդակությունը:

«Սոցիալական» կատեգորիան բավականին լայնորեն է կիրառվում հասարակագիտության գրականությունում<sup>2</sup>: Պատահական չէ, որ այն հասկացել են և այսօր էլ հասկանում են բառի լայն և նեղ իմաստով: Առաջին դեպքում սոցիալականի տակ ընկալվում է հասարակականը, այսինքն՝ դրան վերաբերում են հասարակական կյանքի բոլոր հիմնական ոլորտները, հասարակական հարաբերությունների տեսակները դրանց ամբողջության և միասնության մեջ, իսկ նեղ իմաստով տվյալ կատեգորիան մեկնաբանվում է տարբեր ձևերով, սակայն հիմնականում որպես հասարակական կյանքի հարաբերականորեն անկախ ոլորտային հատված:

Սոցիալական (լատ. socialis) հասարակական, այսինքն՝ կապված է հասարակությունում մարդկանց կյանքի և հարաբերությունների հետ: Սակայն հասարակությունում մարդկանց կյանքը և հարաբերությունները բազմաձև են, բազմապլանային, տարատեսակ: Մարդկանց հասարակությունում տնտեսական, քաղաքական, դեմոկրատական, հոգևոր և այլ հարաբերությունները հանդիսանում են հասարակական, սոցիալական: Այսպիսով, առաջին տեսական դրույթը կայանում է նրանում, որ «հասարակական» և «սոցիալական» հասկացությունները նույնական են: Սակայն, եթե

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

դրանք նույնական են, ապա անհրաժեշտ չէ կիրառել երկու հասկացություններ, որոնք տեսականորեն արտահայտում են նույն բանը՝ մարդկային, հասարակական հարաբերությունները: Իսկ եթե դրանք ընդհանուրի՝ հասարակականի շրջանակներում ունեն առանձնահատուկ բովանդակություն, ապա ինչպիսի՞ն է այն, ինչու՞ն է կայանում դրա բովանդակային-գործառույթային, կառուցվածքային առանձնահատկությունը և այլ նշանակությունը: Իրավական հարաբերությունները ևս հասարակական, սոցիալական են այդ խոսքի լայն իմաստով: Սակայն իրավական, քաղաքական, տնտեսական և այլ տիպի հասարակական հարաբերությունները ունեն սեփական բովանդակության և հասկացության սուբստանցիոնար մեկնաբանություն. դրանք կարող են սկզբունքորեն տարբերվել այն մարդկային իրական հարաբերությունների ինչպես սյուժեների, այնպես էլ հասարակական-սոցիալական բնույթի հետ, որոնք արտացոլվում են գիտական գիտելիքի այս կամ այն հասարակագիտական ոլորտով: Այսպիսով, հասարակական, սոցիալական հարաբերությունները կապված են հասարակությունում մարդկանց կյանքի հետ իրենց կապերի, փոխկապվածությունների, գործունեության տեսակների ամբողջ բազմաձևությունում: Երկրորդ. այդ բազմաձևությունը, մարդկային հարաբերությունների պլյուրալիզմը և գործունեության տեսակները մասնատվում են ըստ որոշակի հիմքերի, տեսակների և, չկորցնելով ընդհանուր տեսակային բովանդակությունը (հասարակական հարաբերությունները և գործունեությունը), ձեռք են բերում տեսակային յուրահատուկ առանձնահատկություններ: Եթե մարդկային սուբյեկտների տվյալ տեսակային հարաբերությունները և գործունեությունը ծագում և իրականացվում են, օրինակ, քաղաքական-իշխանական, համակարգային-քաղաքական հարաբերությունների ոլորտում և տարբեր մակարդակի սուբյեկտների քաղաքական գործունեության տեսակներում, ապա դրանք հանդիսանում են քաղաքական հարաբերություններ և կոլեկտիվ ու անհատական սուբյեկտների քաղաքական գործունեության տեսակներ: Եթե որոշակի սուբյեկտների հարաբերությունները և գործունեության տեսակները ծագում են արտադրության, փոխանակման, սպառման, նյութական բարիքների տարածման, սեփականության հարաբերությունների ոլորտում, ապա դրանք տնտեսական հարաբերություններ են և մարդկանց գործունեության համապատասխան արտադրական տեսակներ: Այլ խոսքերով՝ կարելի է ընդգծել, որ կոնկրետ հասարակագիտության օբյեկտ հանդիսանում է հասարակու-

թյունը ոչ ամբողջականորեն, այլ դրա որոշակի կողմը, ոլորտը՝ հարաբերականորեն ինքնուրույն արտահայտմամբ, իմաստով<sup>4</sup>:

Բառի նեղ իմաստով սոցիալականի խնդրի հետ անորոշություններն ու վիճաբանությունները առավել շատ են: Այն, որ գոյություն ունի հասարակության սոցիալական կյանք, սոցիալական հարաբերությունների ոլորտ հասարակագետ-գիտնականների մոտ, կասկած չկա: Խնդիրը կայանում է տեսական մակարդակում այդ հարաբերությունների բովանդակության առանձնացման, դրանց կառուցվածքի բնութագրման և ամբողջականի առարկայության մեջ: Այդ իսկ պատճառով ուշադրություն դարձնենք տվյալ խնդրին:

Սոցիալական կյանքը կայանում է մարդկային սուբյեկտների անհատական և կոլեկտիվ փոխգործունեությունում, այսինքն՝ այն հիմնավորվում և արտացոլում է սոցիալական հարաբերությունները: Եթե այլ՝ հասարակական, հարաբերությունների ոչ սոցիալական (բառի բուն իմաստով) տեսակները ունեն հստակ արտահայտված և ներկայացված առարկայական ոլորտ, հիմնավորվում են մարդկանց հարաբերությունների և գործողությունների իրական տեսակային և գործունեության ձևերի վրա, ապա սոցիալական ոլորտը ամրագրում է վերջինս առավել բարդ: Բարդությունը, հակասությունը, նույնականացումը, ռեդուկցիան և այլ տեսական, ու գործնական դրույթներ հնարավորություն են տալիս նախնականում ընդգծել սոցիալական հարաբերությունների բովանդակությունը հետևյալ կերպ:

Սոցիալական հարաբերությունները իրենց բովանդակությունում ամրագրում են սուբյեկտների մարդկային կենտրոնացմամբ բնույթի փոխկապվածությունների համալիրը, որը տեսականորեն «պատկերում» է անմիջական մարդկանց, խմբերի, համայնքների կյանքը. վերջինումս արտահայտվում են այդ սուբյեկտների կարիքները և հետաքրքրությունները, դերը և տեղը անհատական և կոլեկտիվ կյանքում: Միայն սոցիալականը իր կոնկրետ սահմանումներում (հարաբերություններ, բովանդակություն, կառուցվածք, ենթակառուցվածքներ և այլն) հնարավորություն է տալիս սահմանել և ամրագրել մարդկային սուբյեկտների դերը և տեղը համալիր, ամբողջականորեն՝ միևնույն ժամանակ չժխտելով այլ ոչ սոցիալական փոխհարաբերությունները, փոխադարձ կապերը, այլ հիմնվելով դրանց վրա, իր բովանդակությունում արտահայտելով դրանց առանձնահատկությունը:

Դրանով իսկ սոցիալությունը իրականությունում տեսականորեն արտացոլվում է սոցիոլոգիայի

գիտությունում: Միևնույն ժամանակ հնարավոր են կենսական, այսինքն՝ գործնական իրավիճակներ, որոնց ժամանակ դրանց ռեդուկցիան տեսական սոցիոլոգիական մակարդակում համարժեք չէ այդ իրականությանը: Օրինակ, XX դարի իրավունքի սոցիոլոգիական դպրոցի կողմնակիցները համարում էին, որ գործող իրավական-նորմատիվային ակտերը ոչ միշտ են համարժեք տնտեսական և սոցիալական մակարդակներին, և այդ իսկ պատճառով առաջարկում էին դատավարական հայեցողության ազատություն: Սոցիոլոգիան դրանով իսկ ուսումնասիրում է սոցիալականը հասարակությունում, այլ ոչ հասարակությունը իր ամբողջ համակողմանիությամբ և ամբողջականությամբ:

Սոցիալականը առարկայական է: Սակայն այդ առարկայությունը չի հանդիսանում միայն սոցիոլոգիայի ուսումնասիրության, իմացության օբյեկտ: Հասարակագիտության մեջ միակ օբյեկտը հասարակությունն է: Հետևաբար, առաջին. իրավաչափ չէ մերժել դրա որևէ կողմը, որը գտնվում է կոնկրետ հասարակագիտության առարկայական ոլորտում այլ գիտությամբ դրա իմացությունից, սակայն իմացության իր առանձնահատուկ տեսանկյունով:

Հասարակության բազմակողմանիությունը, դրա բարդությունը օբյեկտիվորեն ենթադրում է հասարակական կողմերի փոխադարձ լրացում՝ դրանց փոխհամագործակցություն: Տեսությունում դա արտացոլում է գտնում «սոցիալ-տնտեսական», «սոցիալ-քաղաքական», «սոցիալ-իրավական» և այլ հասկացություններում: Երկրորդ. միևնույն ժամանակ իմացության ընդհանուր օբյեկտը՝ հասարակությունը մասնատվում է բազմաթիվ կողմերի, ոլորտների, մակարդակների, որոնք կազմում են գիտելիքի կոնկրետ հասարակագիտության բովանդակությունը և, հետևաբար, հանդիսանում են դրա ուսումնասիրության, հետազոտության առարկա:

Ի վերջո, երրորդը (սա հանդիսանում է ամենադժվարը). սոցիալականի ամրագրում մարդկային սուբյեկտների (խմբերի, անհատների հասարակական ինստիտուտների և այլն) սոցիալական հարաբերությունների միջոցով, որը ներկայացված է հասարակության և միմյանց հետ փոխհամագործակցող սուբյեկտների սոցիալական կառուցվածքում, որպես կանոն, չի արտացոլվում հետազոտությունների առիթը, ըստ որի վերջիններս համագործակցում են: Սոցիալական հարաբերությունների սուբյեկտները, դրանց համագործակցությունը սոցիոլոգիայում առանձնացվում է, սակայն ինչ պատճառով են դրանք տեղի ունենում՝ որպես կա-

նոն, մնում է վերլուծողի իմացությունից դուրս: Հաշվի առնելով սոցիալական ինստիտուտների բազմաձևությունը՝ կարելի է նշել, որ դրանցից յուրաքանչյուրը ունի մարդկային համագործակցության կոնկրետ պատճառ:

Սոցիալականը, սեփական, հարաբերականորեն ինքնավար իմաստով, հանդիսանում է հասարակականի հատուկ ձև, տեսակ. այն հանդիսանում է բարդ, բազմապլանային հասարակական հարաբերություն և մարդկային սուբյեկտների գործունեության տեսակ, յուրաքանչյուր սոցիալական սուբյեկտը ունի հատուկ բովանդակային-գործառնության և այլ նշանակություն. սոցիալական հարաբերությունների բոլոր տեսակները անմիջականորեն չափվում են մարդկային բաղկացուցիչներով, սյուժետներով, և այդ իսկ պատճառով մարդկայինը սոցիալականում հանդիսանում է ոչ միայն հիմնականը, ելակետայինը, այլ նաև արդյունքային հարաբերությունը, գործունեության ձևը:

Այսպիսով, եթե ուսումնասիրում ենք սոցիալականի խնդիրը դրա ցանկացած ձևում, բովանդակությունում, ապա առանձնացնում, ընդգծում, նշում ենք դրա մարդկային բովանդակությունը, չափումը և նշանակությունը: Դա հիմնական եզրակացությունն է, որը հաղիսանում է հիմք իրավական, սոցիալական խնդիրների հետագա վերլուծության համար: Այն ուժեղանում է, երբ ներառվում է տեսական և գործնական տարածություն:

Սոցիալական նշանակությունը, որպես ինտեգրված հասկացություն, բազմանշանակ է, բովանդակային բարդ և բազմապլանային: Առաջին. սոցիալական նշանակությունը սոցիալական երևույթի որոշակի իմաստ է, կոնկրետ ոլորտի բովանդակություն, երկրորդ. այն նշանակում է սոցիալական հարաբերության և գործունեության սուբյեկտի կարևոր, յուրահատուկ, նշանակալից դերը: Ի վերջո, այդ դերը (սոցիալականությունը) միշտ մարդկայնորեն բովանդակային և տարաչափ է, այսինքն՝ արտահայտում է մարդկային կարգավիճակային հետաքրքրությունները, արժեքները և գործունեության տեսակները: Այսպիսով, կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը. որպեսզի մարմնավորվի սոցիալական նշանակությունը կենսակերպի կոնկրետ ձևում, որի անունը իրավունք, իրավական նյութ, իրավական տարածություն է:

Իրավունքն առավել բարդ, բազմաիմաստային, բազմաշերտային, բազմակողմանի հասարակական երևույթ է: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է համաձայնել Ի. Ա. Իլյինի հետ նրանում, որ իրավունքի բովանդակությունը միշտ բավարար «անորոշ» և «պայմանական» է, իսկ դրա իմացություն-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

նր՝ միշտ «ժամանակավոր» և «հարաբերական», որը հանդիսանում է տվյալ հետազոտության հիմնական տեսական եզրակացությունը<sup>6</sup> :

Իսկապես, այսօր գիտա-իրավական գրականությունում գոյություն ունի խնդիրների զանգված, որ ծագել է մի քանի հարյուրամյակ առաջ (օրինակ, պետության և իրավունքի հարաբերակցությունը, համապատասխանաբար և պոզիտիվ իրավունքի, իրավունքի և բարոյականության, մասնավոր և հանրային իրավունքի, իրավական և քաղաքական նորմերի, ինստիտուտների, իրավագիտակցության տեսակների և այլն), սակայն չեն ստացել համակողմանի վերլուծություն գիտնականների ժամանակակից ուսումնասիրություններում:

Չնայած տարբեր տեսական հայեցակարգերի որոշակի հակասությանը՝ դրանք ունեն մի շարք ընդհանուր դրույթներ. իրավունքը իրենից ներկայացնում է սոցիալական երևույթ, առանց որի անհնարին է քաղաքակիրթ հասարակության գոյությունը: Իրավունքը նորմատիվային ձևով պետք է արտացոլի համամարդկային արդարության պահանջը, ծառայի ընդհանուր հասարակական, այլ ոչ նրա առանձին համայնքների կամ սոցիալական խմբերի շահերին՝ հաշվի առնելով անձի՝ որպես հասարակության հիմքի անհատական շահերը, կարիքները, իրավունքը հանդես է գալիս որպես համընդհանուր վարքագծի չափանիշ, կանոն, որոնք հաստատվել և պահպանվում են պետության կողմից: Այս տեսանկյունից իրավունքը իրենից ներկայացնում է ազատության նորմա:

Իրավունքի էության վերաբերյալ հարցը դիտարկվում է իրավունքի տեսությունում հիմնականներից մեկի որակով: Հայտնի է, որ ցանկացած երևույթի էությունը իրենից ներկայացնում է առավել կարևոր, որոշիչ, հիմնարարական, նշանակալից հատկությունների համախումբ, որոնցով ներկայացվում են դրա մնացյալ բոլոր հատկանիշները: Այս ասպեկտով իրավունքի էությունը հանդես է գալիս որպես իրավունքի գլխավոր ներքին որակական հիմք, որը արտացոլում է հասարակությունում դրա կոչումը և բնույթը:

Տարբեր գիտական հայեցակարգերի համակարգում ամենից առաջ առանձնացվում է նորմատիվային տեսությունը, որը բնութագրում է իրավունքի այն գծերը, որոնք ընկած են տվյալ երևույթի մակերեսին: Իրական կյանքում իրավունքը մակերեսում հանդես է գալիս վարքագծի կանոնների որոշակի համակարգի ձևով, որոնք շարադրված են օրենքում և այլ նորմատիվային-իրավական ակտերում. վերջիններս պահպանվում են հարկադրաբար պետության ուժով: Հատկապես ընդհանուր իրա-

վական նորմաների միջոցով պետությունը կիրառում է հավասար մասշտաբ անհավասար մարդկանց նկատմամբ, որի շնորհիվ տեղի է ունենում արատրակտ կանոնների անհատականացում կոնկրետ կենսական պայմաններում:

Իրավունքի նման ընկալումը ստացել է «նեղ» կամ նորմատիվային մոտեցման անվանում<sup>7</sup> : Ելնելով դրանից՝ բոլոր իրավունքները հանգեցվում են իրավաբանական նորմերի որոշակի համախմբի, որոնք արտահայտում են կառավարող սոցիալ-քաղաքական խմբի պետական կամքը և նախատեսված են հասարակական հարաբերությունների կարգավորման համար: Նման մոտեցումը ունի իր սոցիալական արժեքը, քանի որ օրենքում տիրապետող կամքի արտահայտումը հնարավորություն է տալիս իրավունքի լեզվով սահմանել մարդկանց հնարավոր և պարտադիր վարքագծի ձևը և տեսակը:

Հասարակական կամքը ընկած է իրավունքի էության հիմքում: Իրավունքի հիմնական հատկանիշները, որոնք հնարավորություն են տալիս համակողմանի բացահայտել դրա նորմատիվային հասկացությունը, հանդիսանում են իրավական նորմերի ընդհանուր պարտադիրությունը, իշխանության կամքի պետական բնույթը, իրավունքի՝ պետության հետ կապը և իրավունքի նորմաները խախտումներից պահպանության համար պետական հարկադրման կիրառության հնարավորությունը, իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների կարգավորիչի նշանակումը և այլն:

Իրավունքի հնարավորությունները չեն սպառվում օրենքով, քանի որ ապահովվում են կյանքով, գործնական գործունեությամբ: Այդ իսկ պատճառով իրավունքի վերաբերյալ «նեղ» պատկերացումը լրացվում է դրա հասկացությանը առավել լայն, սոցիալական մոտեցմամբ: Դրան համապատասխան՝ իրավունքը հանդես է գալիս որպես մարդկանց, սոցիալական խմբերի, համայնքների, մարդկային ինստիտուտների գործողություններում և վարքագծում հասարակական հարաբերությունների կարգ<sup>8</sup> :

Այսպիսով, իրավունքը հասարակական հարաբերությունների կարգ է, որ սահմանում է մարդկանց վարքագիծը պետականորեն արտահայտված կառավարող և հասարակության իրավագիտակցությունում արտահայտված կամքին համապատասխան. վերջինս կարգավորված է ընդհանուր պարտադիր սկզբունքների, նորմատիվային կանոնակարգերի բարդ համակարգով, որոնք անհրաժեշտության դեպքում պահպանվում են պետական հարկադրմամբ և նպատակաուղղված են կա-

յուն իրավական կարգի հաստատմանը:

Հասարակական հարաբերությունների կարգավորումը հանդիսանում է մարդկային հասարակության գոյության պարտադիր պայման: Սոցիալական կարգավորումը լինում է երկու տեսակի՝ նորմատիվային և անհատական: Առաջինը ունի ընդհանուր բնույթ, քանի որ նորմերը (վարքագծի կանոնները) հասցեագրված են հասարակության բոլոր անդամներին կամ դրա որոշակի հատվածին և չունեն կոնկրետ հասցեատեր: Ի տարբերություն դրա անհատական կարգավորումը վերաբերում է միայն կոնկրետ սուբյեկտին և հանդիսանում կոնկրետ կերպով գործելու անհատական հրաման:

Սոցիալական կարգավորման երկու տեսակները փոխկապակցված են: Նորմատիվային կարգավորումը վերջնական հաշվով հանգեցնում է կոնկրետ անձանց վրա ազդեցությանը: Իր հերթին անհատական կարգավորումը անհնարին է առանց ընդհանուրի, այսինքն՝ առանց իրավունքների և պարտականությունների նորմատիվային հաստատման, որը իրականացնում է նաև մարդկային սուբյեկտների գործունեության տեսակների և հարաբերությունների կարգավորում:

Սոցիալական կարգավորումը լայն համատեքստում ապահովվում է սոցիալական նորմերի օգնությամբ: Դրանք իրենցից ներկայացնում են ընդհանուր բնույթի վարքագծի կանոններ, որոնք շոշափում են հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներ: Սոցիալական նորմերը, բարոյական, կրոնական, քաղաքական, իրավական, կորպորատիվ ավանդույթներ և այլն, ունենում են ըստ իրենց ազդեցության ուժի, բնույթի և մեթոդի՝ ազդեցություն հասարակական հարաբերությունների վրա և խաղում տարբեր դերեր դրանց ձևավորման և զարգացման մեջ:

Սոցիալական նորմերի համակարգում կարևոր դեր խաղում են իրավունքի նորմաները: Հատկապես իրավունքը՝ որպես ընդհանուր պարտադիր, պետության կողմից հաստատված և երաշխավորված իրավաբանական նորմերի համակարգ, հանդիսանում է հասարակական հարաբերությունների հիմնական կարգավորիչ: Միայն իրավունքի միջոցով պետական կամքը ձեռք է բերում ընդհանուր պարտադիրի և ընդհանուր նշանակալիցի նշանակություն բնակչության համար:

Իրավունքը կարգավորում է հասարակական կյանքի առավել կարևոր կողմերը: Այն ամրագրում է սեփականության հարաբերությունները, կարգավորում աշխատանքի և սպառման չափը, նախատեսում պետական մարմինների կազմակերպման և գործունեության կարգը, սահմանում պայքարի

միջոցներ էական հասարակական հարաբերություններին ուսնձգությունների դեպքում և այլն: Իրավունքը հանդիսանում է պետական իշխանության իրականացման հիմնական գործիք և միջոց:

Իրավունքի հիմնական դերը հասարակությունում արտահայտվում է նրանում, որ այն հանդես է գալիս որպես նորմատիվային կարգավորման համակարգ, որը հիմնված է հասարակության տարբեր խավերի շահերի հաշվառման վրա: Իրավունքում միշտ մարմնավորվում է այն սոցիալական խմբի, խավի, ազգի որոշակի կոլեկտիվ կամքը, ում կամքով այն ստեղծվել է: Տվյալ կամքը պայմանավորված է հասարակության կյանքի նյութական, սոցիալ-մշակույթային և այլ պայմաններով: Իրավունքում արտահայտված ընդհանուր կամքը իրենից ներկայացնում է տարբեր մասնավոր շահերի համաձայնության և հասարակական փոխզիջման ձեռքբերման արդյունք: Իրավունքի կամային էությունը առանձնացնում է դրան այլ նորմատիվային կարգավորիչների շարքում և տալիս վերջինիս ընդհանուր սոցիալական և ընդհանուր կարևոր կարգավորիչի որակ: Այս տեսանկյունից իրավունքը հանդես է գալիս որպես հասարակական համաձայնության ձեռքբերման գործիք, որը բացառում է իրավունքի հանգեցումը բռնության, անհատական կամքի ճնշման միջոցի:

Ընդհանուր կամքին իրավունքի համապատասխանությունը տալիս է վերջինիս իրականություն և ապահովում դրա կատարումը, և, հակառակը, եթե այն չի արտահայտում ընդհանուր կամքը, ապա ոչ մի միջոցով, ներառելով պետական հարկադրանքը, հնարավոր չէ ապահովել վերջինիս կատարումը: Իրավունքում իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների համաձայնեցված շահերի ամրագրումը հաղորդում է վերջինիս պարտադիրություն, նշանակալիություն, համընդհանրություն և հաստատում է նորմատիվային կարգավորման գերակայող համակարգի որակով:

Հանդես գալով ընդհանուր սոցիալական կարգավորիչի դերում՝ իրավունքը նորմատիվային ձևով պետք է արտացոլի մարդկային արդարության պահանջները, ծառայի հասարակության շահերին, այլ ոչ վերջինիս առանձին խավին կամ սոցիալական խմբերին, ինչպես նաև հաշվի առնի անհատի՝ որպես հասարակության իրավական հիմքի շահերը:

Կարգավորելով հասարակական հարաբերությունները՝ իրավունքը սահմանում է հասարակությունում ազատության նորման, այսինքն՝ հաստատում է մարդու ազատության և վարքագծի մասշտաբը: Այդ նպատակներով իրավունքը մի կողմից ամրագրում է անձի իրավունքի և ազատություններ

րի լիարժեքության չափը, իսկ մյուս կողմից՝ մարդու ազատությունների թույլատրելի սահմանափակումների չափը:

Եթե դիտարկվի իրավունքը իր էության տեսանկյունից, որը բնութագրում է իրավունքին հասարակական հարաբերությունների կարգավորիչի տեսքով, ապա իրավունքի արժեքավորությունը սահմանվում է որոշակի հասարակական շահերի՝ դրա ապահովման ունակությամբ: Մյուս կողմից, իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների ընդհանուր սոցիալական կարգավորիչի էությունը, դրա արժեքավորությունը սահմանվում է նրանով, որ հասարակությունում այն խաղում է առավել արդյունավետ կարգավորիչի դեր:

Իրավունքի սոցիալական արժեքավորությունը արտահայտվում է հետևյալում. իրավունքը ամենից առաջ տիրապետում է գործիքակազմային արժեքավորությամբ: Այն մարդկանց գործողություններին հաղորդում է կազմակերպվածություն, կայունություն, համաձայնեցվածություն, ապահովում է դրանց վերահսկվածությունը: Դրանով իսկ իրավունքը կարգավորում է հասարակական հարաբերությունները և հանդես գալիս որպես պետական կարգավորման գլխավոր միջոց:

Իրավունքի սոցիալական արժեքավորությունը կայանում է նրանում, որ այն մարմնավորում է հասարակական հարաբերությունների մասնակիցների ընդհանուր, համաձայնեցված կամքը: Իրավունքը նպաստում է այն հարաբերությունների զարգացմանը, որոնցում շահագրգիռ են ինչպես առանձին անձինք, այնպես էլ ամբողջ հասարակությունը: Դրա վերին հասարակական արժեքավորու-

թյունը արտահայտվում է նրանում, որ իրավունքը ունենում է ազդեցություն մարդկանց գործունեության և վարքագծի վրա նրանց ընդհանուր և մասնավոր շահերի համաձայնեցման միջոցով: Էական է, որ իրավունքը չի չեզոքացնում մասնավոր շահը, չի ճնշում այն, այլ միայն համաձայնեցնում է ընդհանուր շահերի հետ: Միևնույն ժամանակ իրավունքի արժեքավորությունը այնքանով է բարձր, որքան այն իր բովանդակությամբ լիարժեքորեն է արտահայտում մասնավոր շահերը:

Իրավունքի սոցիալական արժեքավորությունը սահմանվում է նաև նրանով, որ այն ամրագրում և սահմանում է անհատի ազատությունը հասարակությունում: Իրավունքի արժեքավորությունը արտահայտվում է նրանում, որ այն չի նշում ընդհանրապես ազատությունը, այլ եզրագծում է այդ ազատության սահմանները, չափը: Ազատությունը և իրավունքը միմյանցից անբաժանելի են: Իրավունքը, ըստ իր էության, հանդես է գալիս նաև իրական հարաբերություններում որպես ազատության պատմականորեն սահմանված և օբյեկտիվորեն պայմանավորված ձև, այդ ազատության չափանիշ, պաշտոնական ազատություն:

Իրավունքի սոցիալական նշանակությունը կայանում է արդարության գաղափարները արտահայտելու ունակության մեջ:

<sup>1</sup> Տե՛ս Познер Р. Экономический анализ права. СПб., 2004. С. 8-9.

<sup>2</sup> Տե՛ս Шлекин С.И. Проблема права. Философско-методологический анализ. М., 2013. С. 34-35.

<sup>3</sup> Տե՛ս Шундигов К.В. Синергетический подход в правоведении. Проблемы методологии и опыт теоретического применения. М., 2013. С. 17-18.

<sup>4</sup> Տե՛ս Проблемы теории государства и права. Под ред. А.В. Малько. М., 2012. С. 23-24.

<sup>5</sup> Տե՛ս Матузов Н.И., Ушакова Н.В. Возможность и действительность в Российской правовой системе. М., 2013. С. 29-30.

<sup>6</sup> Տե՛ս Русская философия права. Онтология. СПб., 1999. С. 189.

<sup>7</sup> Տե՛ս Гаджиев Г.А. Антология права. М., 2013. С. 188-189.

<sup>8</sup> Տե՛ս Васев И.Н. Субъективное право как общетеоретическая категория. М., 2012. С. 132-133.

Վարդան Տախկալյան  
Ասպիրանտ Ինստիտուտի փիլոսոփիայի,  
սոցիոլոգիայի և իրավաբանության ՀԱՊ ԲԱ

РЕЗЮМЕ

*Проблема социального значения права*

В статье подробно обсуждаются вопросы, касающиеся социального значения права, ее места и роли в общественной жизни. Статья подчеркивает, что социальная значимость права является индексированным понятием и в содержательном плане также является сложным многослойным явлением.

*Ключевые слова:* право, общество, социальное значение, нормативно-правовой регулятор, общественные отношения.

Vardan Sakhkalyan  
PhD Student of the Institute of Philosophy,  
Sociology and Law NAS RA

SUMMARY

*The problem of social value of rights*

The article discussed the issues concerning the social value of law, its place and role in public life. The article emphasizes that the social significance of law is indexed concept and essentially, is a complex multi-layered phenomenon.

*Keywords:* law, society, social value, normative-legal regulator (governer), public relations.